Արձանագրություն 12

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.10.2019 թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Եփրեմյան - Անվտանգության ապահովման բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Խաչատրյան - Տնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Արեգ Գևորգյան - Անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Հայկ Գրիգորյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային գլխավոր ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Կարեն Բարիկյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Օրակարգ

1. **Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին**

1.1Հաշվի առնելով, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով՝ «անվտանգության և պահնորդային» ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների ստուգման համար ՀՀ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստացվել է պատասխան ըստ որի «Գարդիան» ՍՊ ընկերության պարտավորությունները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գերազանցում են ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնակիցը սահմանված կարգով ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը՝ որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են «Գարդիան» ՍՊ ընկերության և «Փեթակ» ՍՊ ընկերության միջև 24.05.2018թ. կնքված պայմանագիրը, որը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ եղել է գործող և ամբողջ ծավալով կատարված չէ՝ այդ իսկ պատճառով չի կարող ընդունվել որպես նմանատիպ: Ներկայացվել է նաև «Գարդիան» ՍՊ ընկերության և «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊ ընկերության միջև 28.06.2018թ. կնքված պայմանագիրը, որի հետ բացակայում է պայմանագիրն ամբողջ ծավալով, սահմանված ժամկետներում և պայմանագրի դրույթներին համապատասխան կատարված լինելու փաստը հավաստող պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը կամ հանձնման ընդունման արձանագրությունները: Մասնակցի կողմից ներկայացվել են ևս երեք պայմանագրեր, որոնց գումարը չի բավարարում «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1.2 Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Գարդիան» ՍՊ ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի հոկտեմբերի 14-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Եփրեմյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կարեն Խաչատրյան

Արեգ Գևորգյան

Հայկ Գրիգորյան

Կարեն Բարիկյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան